ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ

03 ՀՈՒՆՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆ ԹԻՎ 01 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՅԻՍՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ ՎԵՑ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Ընտանեկան օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության 9-րդ կետի 1-ին ենթակետի «ա» և «բ» պարբերության դրույթներով, հիմք ընդունելով այն փաստը, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Մայիսյան բնակավայրի 15-րդ փող. 2 փկղ. տուն 3 հասցեում գտնվող վեց անչափահաս երեխաները փաստացի գտնվում են առանց ծնողական խնամքի, երեխաների մայրը՝ Նաիրա Մարգարյանը, ծնված 1980 թվականին մեկնել է Արցախ և մնացել շրջափակման մեջ, իսկ հայրը՝ Գագիկ Ժիրայրի Մարգարյանը, ծնված 1975 թվականին գտնվում է կալանավայրում, ուստի հաշվի առնելով Ախուրյանի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2022 թվականի դեկտեմբերի 27-ին կայացած թիվ 9 նիստի դրական եզրակացությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Ախուրյան համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նախագահ՝ Հռիփսիմե Նահապետյանի նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մայիսյան բնակավայրի 15-րդ փող. 2 փկղ. տուն 3 հասցեում բնակվող վեց անչափահաս երեխաների՝ Սյուզաննա Գագիկի Մարգարյանի /ծնված 09.09.2006թ. / նկատմամբ հոգաբարձու, իսկ Լենա Գագիկի Մարգարյանի /ծնված 07.07.2009թ./, Ալվարդ Գագիկի Մարգարյանի / ծնված 21.12.2011թ./, Ալիսա Գագիկի Մարգարյանի /ծնված 20.12.2013թ, Ալինա Գագիկի Մարգարյանի / ծնված 03.08.2016թ./, Տաթև Գագիկի Մարգարյանի, /ծնված 23.10.2019թ. / նկատմամբ խնամակալ, մինչև ծնողի՝ Նաիրա Մարգարյանի վերադարձը:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԿԱՐԵՆ ԱՐՇԱԿՅԱՆ**

/ՓՈՒՇԱՐԻՆԵՎ/

03 հունվարի 2023 թ.

գ.Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՀՈՒՆՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ N 2-Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՀՐԱՄԱԲԵՐԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-108-0027-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ 0,053628 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով և համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի, դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետի պահանջների՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Վահրամաբերդ բնակավայրի տարածքում գտնվող 08-108-0027-0001 կադաստրային ծածկագրով հողամասի սահմաններում նոր առաջացած 0,053628 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝ «Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Վահրամաբերդ, 19-րդ փողոց, 1/2 հողամաս»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Կ. ԱՐՇԱԿՅԱՆ**
(փոխարինող)

«05» հունվարի 2023 թվական
գյուղ Ախուրյան